ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/29

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի 22.08.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/29 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 22.08.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ս/թ. հուլիս ամսին մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից զովազդային նյութերի /ցուցապաստառներ/ ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Պատվիրատուի կողմից «Armeps» համակարգի միջոցով «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկված ծանուցման մեջ նշված է եղել, որ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «ՊիՊաս Ֆուդ» ՍՊԸ-ն: Սակայն իրականում «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել 2-րդ չափաբաժնի մասով, ուստի որակավորման չափանիշները

հիմնավորող համապատասխան փաստաթղթերը «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել՝ սպասելով ճիշտ ծանուցմանը: Սակայն չստանալով ճշտված ծանուցումը՝ Ընկերությունը ուշացումով է պատասխանել վերոնշյալ ծանուցմանը:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝

Ընկերությունը գտնում է, որ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջի Ընկերության կողմից ներկայացված հայտը պետք է գնահատվեր բավարար, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ համապատասխան որոշում կայացնել, մասնավորապես թույլ տալու «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին մասնակցելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով ընթացակարգի հետագա գործընթացին, այն է՝ որպես 1-ին տեղ զբաղեցրած և համապատասխան փաստաթղթեր ներկայացրած մասնակից կնքել համապատասխան պայմանագիր և մատակարարել պայմանագրով սահմանված ապրանքը:

«ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն 28.08.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ խնդրել է փոփոխել 22.08.2017թ. բողոքով ներկայացված պահանջը, դարձնելով այն՝ դադարեցնել «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.08.2017թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 22.08.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Ի պատասխան Խորհրդի 22.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1504-17 գրության՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.08.2017թ. թիվ ԴՎԱ/2870 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները՝ armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել են երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժակետում ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.08.2017թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Պատվիրատուն ընդունում է, որ սխալ չափաբաժնի մասով է ծանուցել և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Էլեկտրական պարամետրերի չափման գործիքների», «Գովազդային նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «armeps» համակարգի միջոցով հայտ է ներկայացրել «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն:

2.***«Էրկա Սթայլ» ՍՊԸ-ն*** Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրել է Հավելված 1-ը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը, որով Ընկերությունը հայտնել է, որ ***ցանկություն ունի մասնակցելու*** ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ***2-րդ չափաբաժնին*** (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 4.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատման արդյունքում «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ «Պիպաս ֆուդ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնով:

4. Պատվիրատուն 04.08.2017թ. ծանուցմամբ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին հայտնել է, որ Ընթացակարգի գնահատման արդյունքում վերջինս Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և որ Ընկերությունը պարտավորվում է հրավերով սահմանված կարգով և ժամկետում Պատվիրատուի էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.08.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 ենթակետով կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, 2-րդ չափաբաժնով մերժել է «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի հայտը, այն պատճառաբանմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի 22.08.2017թ. ներկայացրած բողոքը, ի լրումն բողոքի 28.08.2017թ. գրությունը, Ընկերության կողմից ներկայացված հայտը, «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և հրավերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:***

Կարգի 43-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը***, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Էլեկտրական պարամետրերի չափման գործիքների», «Գովազդային նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «armeps» համակարգի միջոցով հայտ է ներկայացրել «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Էլեկտրական պարամետրերի չափման գործիքների», «Գովազդային նյութերի» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «2» չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	Էլեկտրական պարամետրերի չափման գործիքների / Իմմիտանսի չափիչ Ե7-20
2	*Գովազդային նյութեր /Ցուցապաստառներ/*

«Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին

ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար (եթե ընթացակարգն իրականացվում է մեկ չափաբաժնով, ապա մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ամբողջ չափաբաժնի համար):

«Էրկա Սթայլ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրել է Հավելված 1-ը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը, որով Ընկերությունը հայտնել է, որ ***ցանկություն ունի մասնակցելու*** ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ***2-րդ չափաբաժնին*** (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 4.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատման արդյունքում ***«Էրկա Սթայլ» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել 1-ին չափաբաժնով, իսկ «Պիպաս ֆուդ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնով:***

Նույն արձանագրության 4.2 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Պատվիրատուն 04.08.2017թ. ծանուցմամբ «Էրկա Սթայլ» ՍՊԸ-ին հայտնել է, որ Ընթացակարգի գնահատման արդյունքում վերջինս Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և որ Ընկերությունը պարտավորվում է հրավերով սահմանված կարգով և ժամկետում Պատվիրատուի էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.08.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 ենթակետով կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, 2-րդ չափաբաժնով մերժել է «Էրկա Սթայլ» ՍՊԸ-ի հայտը, այն պատճառաբանմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն չի պահպանել գնումների մասին ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Կարգի 43-րդ կետի պահանջները, այն է՝ Ընկերությանը 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել և ծանուցել է որպիսի վերջինս ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, այնինչ՝ Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել միայն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն մերժելով Ընկերության հայտը գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի կողմից 22.08.2017թ. ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված՝ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ